Արձանագրություն N 5

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/126» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման հանձնաժողովի նիստի

ք. Երևան

22.09.2020թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Աբրահամյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Քալանդարյան, Գ. Սաֆարյան, Գ. Խարբության,, Ա. Մնացականյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/126» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ռ. Աբրահամյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ **2020 թվականի սեպտեմբերի 18-ին, ժամը 10:30-ին,** Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտիի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/1267» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ռ. Աբրահամյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	Խապարտշին ՍՊԸ
2	ԳԱՄՇԻՆ ՍՊԸ
3	Երկնաքեր ՍՊԸ
4	Ամարաս-Յուս ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ռ. Աբրահամյան)

3.1 Գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկներ:

Գնման առարկայի անվանում	նախահաշվային գին	<<	Մասնակիցների անվանումները	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Աջափնյակ վարչական շրջանի հ. 46 մանկապարտեզի ջեռուցման համակարգը հ. 156 հիմնական դպրոցի համակարգից առանձնացման աշխատանքներ	51543710	1	Խապարտշին ՍՊԸ	39088697.5	7817739.5	46906437
		2	ԳԱՄՇԻՆ ՍՊԸ	38118300	7623660	45741960
		3	Երկնաքեր ՍՊԸ	40878195	8175639	49053834
		4	Ամարաս-Յուս ՍՊԸ	42885575	8577115	51462690

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ռ. Աբրահամյան)

4.1 Գնահատող հանձնաժողովը հայտերի բացման և գնահատման ընթացքում արձանագրեց հետևյալ անհամապատասխանությունը հրավերի պահանջների նկատմամբ.

Ամարաս-Յուս ՍՊԸ-ի հայտում բացակայում է հրավերով պահանջվող հայտի ապահովումը /հավելված 3/, լիազորագիրը, ինչպես նաև ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացված է շահույթով:

Երկնաքեր ՍՊԸ-ի դիմում հայտարարությունը /հավելված 1/ թերի է, մասնավորապես լրացված չեն ընկերության գործունեության հասցեն և հեռախոսահամարը:

Խապարտշին ՍՊԸ-ի ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացված է շահույթով:

ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ի ծավալաթերթ-նախահաշվում բացակայում է սարքավումների արժեքը:

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և առաջարկել **Ամարաս-Յուս ՍՊԸ**–ին, **Երկնաքեր ՍՊԸ-ին, ԳԱՄՇԻՆ ՍՊԸ-ին** և **Խապարտշին ՍՊԸ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու դեպքում մասնակիցների հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ռ. Աբրահամյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել փաստաթղթերի ստացումից անմիջապես հետո, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... **Ռ. Աբրահամյան**

Անդամներ՝ ..... **Մ. Քալանդարյան**

..... **Գ. Սաֆարյան**

..... **Գ. Խարբության**

..... **Ա. Մնացականյան**

Քարտուղար՝ ..... **Ս. Եղիազարյան**